

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ, Ապրիլի փողոց

ՄՈՒԴԱԹՅԱՆ ԺԻՅՆ ԴԻՄԱՍ

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԴՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՄԷԿ անգամի համար տողը 3 ԴՐՁ. ողջ.
ՄԷԿ անգամի առաջի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺՆԵ ԴՐՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տարեկան ԴՐՁ. ողջ 400
Վեցամսեայ » 55
Եռամսեայ » 30

ՕՏԱՐ ԴՐՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տարեկան ԺՐ. 26
Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՁՈՒՄՈՒՆ

ՈՒՆԻ ԴՐՈՒՆՈՒԹՅՈՒՆ



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԴԵՄԲԵՐ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն Խմբագիր Յ. ԱՂՓԻԱՐ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՒ

ԱՂԵՐՍ. ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Շարունակութիւն ճախորդ թիւէն),

Մեր չորրորդ ու վերջին հարցումն էր՝

«Վսեմ, Պօղոս փաշայի մշտական ատենապետի հանգամանքը Սահմանադրութեան համաձայն է, թէ ոչ»:

Երկու կողմէն գրուածները ուշադրութեամբ կարդացողը կը տեսնէ թէ «մշտական ատենապետի» պաշտօնին համար, անոնք՝ ոչ միայն իրարու հակառակ են այլ և իւրաքանչիւր կողմի գործներն ալ իրենք իրենց մէջ համաձայն չեն այս մասին:

Մեր վերոյիշեալ հարցումին պատասխանելէ յառաջ ուրեմն՝ անհրաժեշտ է այս մասին կարեւոր գրուածներու ամփոփումը համառօտիւ ծանօթացնել «Փարոս»ի ընթերցողներուն:

Ընդդիմադիր կողմէն Տիար Մ. Գալֆայիան կ'ընդունի թէ Վսեմ. Պօղոս փաշա «մշտական պատուակալ առաջին ատենապետն» է թաղական խորհրդոյ և բացառիկ պարագաներու մէջ իրաւասութիւն ունի ինքնին տնօրէնութիւններ ընելու:

Այս մասին Տիար Մ. Տամատեան բոլորովին տարբեր կերպով կը դատէ: Պաշտպան կողմէն՝ Տիար Լ. Մկրտչեան կը յայտարարէ թէ «մշտական ատենապետութիւն»ը լոկ տիտղոս մըն է, որ ծագում առած է ժամանակաւ բազմաբախտ Առաջնորդի մը իր բացակայութեան ատեն՝ Ն. Վսեմութիւնը իրեն փոխանորդ կարգելու պարագայէն:

Վերջին անգամ մեր Աղեքսանդրիա գտնուած ժամանակ իմացանք պաշտպան կողմի պատկանող քանի մը բարեկամներէ թէ՛ Պօղոս փաշա Աղեքսանդրիոյ հայոց միաբնակիցին է և իբր այն ճանչցուած եգիպտական կառավարութեանէն:

Հիմնական թաղական խորհուրդի փոխ-Ատենապետ Պէյն՝ Աղբաւտեանի մին Գործադիր Ժողովոյ ուղղած ծանօթ նամակին մէջ Պօղոս փաշայի պաշտօնը կ'որակէ «Աղեքս

անդրիոյ Հայ հասարակութեան մըջ տական ատենապետ» խօսքով:

Գանք մեր գիտողութիւններուն. և թէ Ն. Վ. Պօղոս փաշա Նուպար թաղական խորհրդոյ «պատուակալ ատենապետ» էր և է, ապա ուրեմն գործին ատենապետ չէր և չէ. պատուակալ ատենապետութիւնը տիտղոս մըն է առանց պատասխանատուութեան և պարտաւորութեան: Գործին ատենապետութիւնը պաշտօն մըն է պարտաւորութիւններով ու պատասխանատուութիւնով: Քանի որ Ն. Վ. Վսեմութիւնը թաղական խորհրդոյ գործին ատենապետութիւնը վարած է ու կը վարէ, ապա ուրեմն պատուակալ ատենապետ չէր կրնար ըլլալ այն ատեն և չի կրնար ըլլալ հիմայ ալ:

Ընթացքը որ Պօղոս փաշա բռնած է, 1899ի դեկտեմբերին, հիմնական թաղական խորհուրդին կազմութեան ատեն, կը ցուցնէ թէ Ն. Վսեմութիւնը «մշտական ատենապետութիւն»ը կամ «Առաջնորդական փոխանորդութիւն» տիտղոս չի նկատեր, այլ իրեն կարեւոր իրաւասութիւններ տուող պաշտօն մը:

Հակառակ այն հիացումին զոր ունինք Ն. Վսեմութեան ամենամեծ արժանիքին ու վարչական ամենափայլուն կարողութիւններուն համար, հակառակ մեր ուրախութեան ու ամենախորին գոհունակութեան որ ունինք տեսնելով Նորին Վսեմութիւնը Աղեքսանդրիոյ թաղական խորհուրդին գլուխը, ստիպեալ ենք հոս Սահմանադրութեան անունով գիտողութիւն ընելու թէ «ատենապետութիւն մը մշտական չի կրնար ըլլալ»:

Ատենապետութիւնը՝ ամենանի մը անդամներն են որ գաղտնի քուէով կուտան իրենցմէ ամենէն արժանաւորին և որչափ ատեն որ այդ ատենը գոյութիւն ունի, ատենապետութիւնն ալ գոյութիւն կունենայ, և որովհետեւ ըստ Սահմանադրութեան ոչ մէկ ատեն մշտական է, հետեւեալ որ ոչ մէկ ատենապետութիւն ալ մշտական հանգամանք կրնայ ունենալ:

Գալով Առաջնորդական փոխանորդութեան պարագային, գիտողութիւն կ'ընենք թէ, Առաջնորդ մը երբ ի

պաշտօնի է վիճակի մը մէջ, այն ատեն միայն իրաւունք ունի փոխանորդ կարգելու, փոխանորդը կրնայ զրուիլ Առաջնորդին ներկայութեան կամ բացակայութեան, երբ ի ներկայութեան կը զրուի, փոխանորդն այն իրաւասութիւնը ունի վիճակին գործերուն համար, ինչ իրաւասութիւն որ ունի Պատրիարքին փոխանորդն ի Պալատ, կեդրոնական գործերուն համար:

Երբ բացակայութեան կը կարգուի, փոխանորդն կը վայելէ Առաջնորդին բոլոր իրաւասութիւններն, եթէ սակայն զանոնք սեղմելու պայման դրուած չէ Առաջնորդին կողմէ: Դարձեալ Առաջնորդական փոխանորդութիւն մը կրնայ ըլլալ ընդհանուր կամ մասնաւոր: Ընդհանուր է երբ իրաւասութիւնը կը տարածուի ամբողջ վիճակին վրայ. մասնաւոր երբ անոր մէկ մասին վրայ բայց ամեն պարագայի մէջ, փոխանորդութիւն մը կը դադրի երբ զայն տուող Առաջնորդը կը հրաժարի իր պաշտօնէն:

Տիար Լ. Մկրտչեանի գրածէն այնպէս մը կը հետեւի թէ Պօղոս փաշայի Աղեքսանդրիոյ համար փոխանորդութիւն տուող Առաջնորդը, Ամեն. Իզմիրեան Սրբազան, իր մեկնելու պահունք ըրած է այդ կարգադրութիւնը, անշուշտ զուտ վարչական գործերու համար: Ասի ճիշդ չեմ կար մեզի, վստիքի իր ատենին ըսած է թէ Ն. Ամենապատուութիւնը այդ կարգադրութիւնը ըրած է 1888ին, իր հրաժարումէն տարիներ առաջ, թաղական փաշայի մահէն և նոր թաղական խորհուրդի մը կազմութենէն անմիջապէս յետոյ: Ներկայ վէճին մէջ որչափ շահեկան պիտի ըլլար հրատարակութիւնը այն պաշտօնագրին, որ Նորին Ամենապատուութիւնը այս առթիւ ուղղած է Եգիպտական կառավարութեան: Մինչև որ լոյս տեսնէ այդ պաշտօնագիրն և անոր տրուած պատասխանը, մենք օժանդակ ունենալով տրամաբանութիւնը, այն կարծիքէն ենք թէ Իզմիրեան Սրբազանէ Պօղոս փաշայի տրուած փոխանորդութիւնը, այն չըրան համար էր, որ Նորին Ամենապատուութիւնը Եգիպտոսի վիճակին մէջ իբր Առաջնորդ կը պաշտո-

նարարէր և հետեւեալ Պօղոս փաշայի առաջնորդական փոխանորդութիւնը դադրած է, այն օրէն, որ Իզմիրեան Սրբազան վերջնականապէս թողած է Եգիպտոսը:

Այսպէս Պօղոս փաշա, ըստ Սահմանադրութեան, չկրնար ըլլալ առաջնորդական փոխանորդ, չի կրնար ըլլալ նաև միաբնակից: Սահմանադրութեան 46րդ. յօդուածին 4րդ. և 5րդ. հատուածներուն համաձայն, միաբնակիցութիւն ըսուած բանը Հայոց ազգին համար ջնջուած ըլլալով՝ կը մնայ ճշդել թէ Եգիպտական կառավարութիւնը իրօք ճանչցած է այս տեսակ պաշտօն մը. կարծենք թէ Աղեքսանդրիոյ Պատ. թաղական խորհուրդը, շատ հասկանալի պատճառներով՝ պարտաւոր է այս և վէճի առարկայ ուրիշ կարևոր կէտերու վրայ պէտք եղած լոյսը սփռել հրապարակաւ:

Թաղական խորհրդոյ մշտական պատուակալ ատենապետութիւն, առաջնորդական փոխանորդութիւն և միաբնակիցութիւն, պաշտօն ըլլան թէ տիտղոս, որոնք կը վերադրուին Պօղոս փաշայի, պաշտօնական հեղինակութիւն ունեցող աղբիւրէ մը չեն յայտարարուիր սակայն, այդ գործը կը կրէ միայն Վսեմ. փոխ-Ատենապետ Պէյնի ծանօթ նամակն, որ Պօղոս փաշա կոչուած է, ինչպէս ըսինք, Աղեքսանդրիոյ Հայ հասարակութեան մշտական Ատենապետ:

Այս պաշտօնը, որ գոյութիւն չունի Սահմանադրութեան մէջ, ուստի և ինչպէս ծագում առած է, չենք գիտեր: Տիար Մկրտչեանի տուած բացատրութիւնները մեզ գոհացնելէ հետո և, մանաւանդ թէ ինչ որ վրսեմ. փոխ-Ատենապետ Պէյնի համար լիազօր պաշտօն մըն է Տիար Մկրտչեանի համար «լոկ տիտղոս» մը կը մնայ:

Բնականաբար մենք աւելի կարելիութիւն կուտանք Վսեմ. փոխ-Ատենապետին՝ յանուն թաղական խորհրդոյ ամբողջութեան ըրած պաշտօնական յայտարարութեան և ոչ թէ Տիար Մկրտչեանի բացատրութեանց, որ մանաւանդ այնքանով կը պնդէ թէ ինք՝ այս խնդրին մէջ իբր պարզ անհատ մը կը գրէ անպաշտօն

կերպով և ոչ իբր քարտուղար թաղական խորհուրդի:

Ամփոփելով ուրեմն մեր ընդլայնած տեսութիւնները, հետեւեալ կերպով կուտանք մեր չորրորդ հարցումին պատասխանը՝

Վսեմ. Պօղոս փաշայի մշտական Ատենապետի հանգամանքը Սահմանադրութեան համաձայն չէ՝

(Շար. և վերջ ճիմգշարթի թուով).

“ Բ Ի Ա Ն Ք Օ ”, Ն

(ՆՈՐԱՎԷՊ)

Ձեզի իրական պատմութիւն մը բռնմ, մտիկ բերէ:

Հայերը քիչօր էին Վոսփորի ասիական եզերքի այդ սիրուն պզտիկ գեղին մէջ. սիրոյ տարիքը հասած կամ չանցած երիտասարդ ըլլալով՝ միայն իրենց կային գրեթէ Տղան, դեռ պատանի, ճանչցած էր աղջիկը տասը տարեկան հասակին մեջ, երբ ասոր ընտանիքը կէտիկ-բաշայէն եկած էր հաստատուիլ իր գիւղը՝ Հեռուէն, շահախնդիր հոգածութեամբ մը հետեւեր էր այդ ապագայ խոստացող աղջկան գարգացումին, քիչ մը ան մարդուն պէս որ կը հսկէ տուն կի մը վրայ որուն հասունութենէն պտուղ կամ ծաղիկ կը յուսայ: Թարաբերութիւնները սկսան բնականաբար այն օրէն երբ աղուն նայուածքներուն տակ՝ աղջկանը ալ հասունցած սրտին մէջ սէրը կըցաւ տրոփել նոր ծնած կեանքի մը պէս: Թարաբերութիւններ, ինչ խոշոր բառ: Որոշ ժամերու, առտու և իրիկուն, մանչը կ'անցնէր պատուհանի առջեւէն, ուր աղջիկը կ'սպասէր: Կիրակի օրերը աղան իր նաւակովը ձկնոր, առթեան կ'ելար աղջկան ծովահայեաց տան առջը: Կը թղթակցէին սակայն: Ահա իրենց յարաբերութեանց սահմանները. ինչ որ համարձակ սէրերու համար սկիզբ մըն է միայն, առաջին գլուխը հաստիւն, իրենց սիրոյն ամբողջ պատմութիւնն էր, շատ մը հայկական սէրերու յատուկ նկարագիր:

Տարի մը ետքը աղան սկսած էր իր նաւակներուն մէջ ամուսնութեան խօսք բանալ: Կ'ըսէր որ կուզէ աշխատիլ, գործը — արհեստով փորագրիչ էր — ընդարձակել, դրամ ժողովել, օրպէսզի իր կինը կարենայ երջանիկ ընել: Միայն կը խնդրէր աղջիկէն որ օպասէ, ուրիշ հետ չամուսնանայ: Աղջիկը դեռ սիրոյ միամիտ շրջանին մէջ, կը խոս-

տանար, կարծես խոստում չի բռնողի առատաձեռն անհոգութեամբ: Երեք տարի վերջը աղան ինքզինք մօտեցած կը տեսնէր իր երագին. 40 ոսկիի հեռաւորութիւն մը միայն կար իր և անոր մէջտեղ: Միտքը դրած էր, 200 ոսկի ժողոված օրը՝ երթալ հօրմէն աղջկան ձեռքը ուզել: Ընդունելուն տարակոյս չունէր. ինք սերիշներուն պէս «թրախօմն» չպիտի ուզէր. պարկեշտ էր, աշխատող, խանութ ունէր, 200 ոսկի պատրաստ դրամ, և աղջկան սիրտը:

Օրին մէկը, աղջկան մայրը բռնեց գաղտնիքը: Ճշմարիտ էր որ Սաթնիկ, որ արդէն գարօց գացած ատենն իսկ «անանկ կրող կարողացող» մը չէր, երբեմն երբեմն սենեակը կը քաշուէր ժամերով ու «բաներ» մը կը գրէր: Սիրային նամակագրութիւն: Տաժանելի աշխատութիւն մըն էր ասիկա խեղճ անուա աղջկան համար, կաղն ի կաղ ինչալով ելլելով, չգտնուած բառերու պատրաստութիւն մէջ գլորելով, տառապալներուն քարնդոտներուն զարնուելով, ծանր բռն մը տանողի քրտնաթոր ու սայթաքող ճիւղերով: Հարցուցեր էր անգամ մը թէ ինչ կը գրէր կոր ատանկ... «Երգ մը միտքս ինկաւ տէ, կը գրեմ կոր քի չի մօտնամ» պատասխաններ էր աղջիկը: Երգերը երթալով կը շարաւային կոր: Առանց նօրէն խօսք բանալու, մայրը սկսաւ լրտեսել: Տեսաւ որ Սաթնիկ թուղթերը խնամով ծածուկ տեղ մը կը պահէր կոր: Բան մը կուզէր: Գիշերուան մէկը, երբ աղջիկը քնացած էր, գնաց թաքստոցէն հանեց թուղթերը ու էրկանը առնէ շարեց մէկիկ մէկիկ առանց բառ մը արտասանելու, պոկուիքը պիւրկ, յօնքերը շարագուծօրէն պոստուն, խորհուրդ մը կատարող ըմբօնէին հանդիսաւորութեանը մէջ փաթեց:

— Ինչ է առ, բռն մարդը, թուղթերուն նայելով ուր շատ մը արշտկուած նախա, գիրքիկ կային, ու նոր նամակի մը մարտը, սկսուած:

— Կարդա՛, բռն կինը առանց պատասխանելու:

«Սիրելիդ իմ Գարեգին...»

— Աս ինչ է, բռն էրիկը:

— Հի՛շ, դուն կարդա՛, ետքը կ'ըսեմ, բռն կինը գլուխը երեցնելով, ու դաժան նայուածքով մը սպասալիք կարգալով հեռուսը մէկու մը, աղուն, աղջկանը, երկուքին ալ:

Մարդը կարգաց, արմանքէ գարմանք գլորելով: Այնքան զօղ ելաւ որ մօցաւ

սուրճը խմել, բան մը որ բնականաւոր չ'էր իրեն:

* * *

Ամիս մը ետքը աղջկան ընտանիքը գեղէն մեկնեցաւ. անձայն անշուշտ, Բնաւ երես չ'եկան աղջկան: Կինը համոզած էր մարդը — որ աղջկանը աղուր ծնծ մը քաշելու խօսք կ'ընէր — թէ աս աղէտի միակ ճարը, փրկութեան տանող էն կարճ ճամբան՝ պատրուակով մը գեղը ձգել երթալն էր, առանց աղջկանը բան մը կուսնել տալու: Պատրաստութեան մեկնումի: Աղջիկը, շանթահարուած, գաղտուկ գաղտուկ լացաւ: Ուրիշ ինչ կրնայ ընել հայ աղջիկ մը, ասանկ պարագաներու մէջ: Նամակով իմացուց սիրահարին: Խեղճին խնթնալը բան մը չ'էր. առանց սպասելու որ 200 ոսկին ամբողջանայ, գնաց անձամբ հօրմէն աղջիկը ամուսնութեան խնդրեց: Բացէ ի բաց մերժում մը, երեսն ի վեր պօռալներ, վրաքնտելու նմանող բան մը: Հոս, ծնողաց բարկութիւնը իր էն խոշոր ձայները հանեց: «Սա խէզը նայէ, սա քաջճի քայրչաւիկ, իրենց աղջկանը հետ քօթեղանութիւն ընելը հերթէ չ'էր, մէկ մըն ալ ելեր ամուսնութեան կ'ուզէր կոր Մէկ հատիկ աղուր աղջիկին, 300 ոսկի քրախոռնակով որք ուզէին նէ չ'էին իտար, ինչ փեսայ ուզէին նէ չ'էին առնէր...»

Գիշերը, էրիկ կինի խօսք մէկ քննելու ետք, եկան աղջկան առջև խօսք բացին. ամէն յոյս ա՛յր սրտէն փրցնել հանելու, իր սիրոյն հոգեհանգիստը կատարեալ ընելու նպատակով:

— Բա՛ թաքուկ, սկսաւ մարդը, ասոր բան մը ըլլայ քի:

— Խեղ ըլլայ, ինչ է նայինք...

Հայ ծնողները, ծնողներուն էն իմաստունները յաճախ, երբ ընտանիքին շահը, պատիւը պահանջէ, դերասան կ'ըլլան երբեմն: Մայրերը մանաւանդ, երբ իրենց մանչուն կամ աղջկան սիրոյ մէկ գագացումը — զոր չգիտնալ կը ձեռնցնէ — սզեն խղզիւ, մինչև վայրագութիւն կը բարձրացնեն իրենց գերը:

— Հը՛, բռն մարդը մենախօսելով, վա՛յ շունչանողի վա՛յ,

— Է՛ չ'ըսեմ, բռն կինը անհամբեր. ենչ կայ, ինչ է եղեր

— Ինչ պիտի ըլլայ, սա հոստեղը Գարեգին մը չիկայ, փորագրիչ է ինչ է:

— Է՛ հա, ինչ է եղեր քի

— Երկեր է այսօր խանութ՝ Սաթնիկը ամուսնութեան կ'ուզէ կոր...

Հայր ու մայր զգուշացան նայել աղջը

ուրիշը իր վայրկեանի կիրքերուն ծառայեցնելու համար միայն կ'զգնուէր:

Ժերմէն խորին սքանչացում մը միայն կը ներշնչէր դեռ իրեն. իսկ Իքպալ համարէն ամբողջովին իրեն կը տիրապետէր. սրբատաշ դիմագծերով. ճապուկ անդամներով, վիթի աշուղներով այդ Կարապետի թիւղեղ կնոջ օէրը պահպանելու համար, անի իր հարստութիւնը կը գոհէր, իշխանական թագը կ'ուրանար: Ուստի, նորեկին և իր սիրականին մէջտեղը՝ իր տղար սիրտը վառանք չունեցաւ, որեւէ գործ մը պատրուակ բռն և Ժերմէնը իր մօրը ըսով թողնով, իոյս տուաւ:

Այն ատեն սեղանին ձեռքով ձայնէ՛ր անձայն անխօսակ կերակուր կերած տեղէն՝ նկատահասակ կին մը որը ելաւ և նախառաջ հանրմին խորհուրդ հարցնելէ վերջը, շատ լաւ Ծրաներէնով մը Ժերմէնին հարցուց:

կան երեսը. որ տենդի կարմիրներէ և մահատիկ դակուութիւններէ կ'անցնէր, — մինչ մայրը դիտարկողական կերպով հերթադարձութի մը մէջ՝ անուշ վեր կը նետուէր ընդստ, «ինչ, ինչ ըսիր» պօռալով, և հայրը կէս ծաղրածու, կէս զայրացկոտ շեշտերով կ'սկսէր պատմութեան խեղճին սիրտը ոստում մը բռնած էր, և կը մնար կարծես առիւտ, բարախում զօրկ — բար կամ սառ կտրած արցունք մը:

Երբ կնիկն անվերջ բացագանչութիւններով ընդմիջած պատմութիւնը լնցաւ, այր ու կին, թեկնին սոթած, լիաբազուկ ինկան խեղճ Գարեգինին վրայ: Մէկ քանի վայրկեանէն նամակներուն «սիրելիդ իմ Գարեգին, ըսող Գարեգին»-էն ուրիշ բան չ'մնաց գետինը բայց եթէ ծաղրանկար մը, ոգորմելի խամսակ մը, բարկեղանական խեղականութեամբ արարած մը, կոխկոտուած, քաշկոտուած, քարկոծուած, թուրումուրով ծածկուած:

— Վա՛յ էշու կտոր վայ, կ'ըսէր մարդը, սա քաջճի քայրչաւիկն նայէ, սա...

— Սա խէզը, սա խլուր, սա լղրճուկը պէ՛մ կը բռնէր անդին կինը:

Այսպէս կարգացուեցաւ Սաթնիկի և Գարեգինի սէրերուն դամբանականը:

Սիրոյ երեք տարիներ լացին:

Մ. Ս. ԿԻՐՈՍԻԱՆ
(Մնացեալը յաջորդով)

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԵՆ

Մուշի, Կարնոյ և Սասունի մէջ վերջերս պատահած շարդերուն վրայ խիստ անորոշ տեղեկութիւններ մեզ հասած էին այն օրէն ի վեր որ՝ այդ շարագուշակ լուրերը արձագանդ գտան հեռադրական գործակալութիւններու շրջաբերականներուն և երկրպալան թերթերուն մէջ:

Այս անգամ սակայն, «Տէլի Երեւոյ»-ի 27 սեպտեմբերի թուին մէջ հետեւեալ մանրամասնութիւնները կը գտնենք զփաղագարար:

Անդախական այդ թերթը, որ իր լուրերը ընդհանրապէս լաւատեղեկ աղբիւրներէ կը քաղէ, Հայկական գործերու վրայ հետեւեալ տեղեկութիւնները ստացած է իր Պոլսոյ թղթակցէն:

«Մինչև այսօր հաստատապէս բան մը կարելի չէ գիտնալ Մուշի և վայրագութեանց վայրերուն մէջ անցած գործածին վրայ:

«Բնականաբար, հեռագիր չկայ որ գրաքննութեան մաղէն անցած չլլայ, և շատ զօրաւոր պատճառներ կան հաւատարմութեան հետ բաղդատելով՝ քիչ մի վերջը ցոյց տուած այնքան յանկարծակաւ պաղուցիւնը,

— Թերեւս կ'ուզէր ճաշել, օրորող: Ժերմէն, յանկարծակիի եկած, բռն թէ անթի չէր...: Ոչ, անորոշակ վախած, ելած գացած էր այդ տարօրինակ ներկայացումէն, իրենց ուսելիք միտքը բզբտող այդ կնիկուն շատ քիչ անորոշագրիտ տեսարանէն, որոնք անխտիր պնակներուն մէջ կ'ուտէին, մատուցներին իւրաքանչիւ, ձեռնուրներուն թացան ու ճարպ վազելով:

Թերեւս նմանապէս այն յախուռն կերպը որով փաշան իր ըսովէն մեկնում էր, քիչ մը առաջուան փափկանկատ քաղաքավարութեան հետ բաղդատելով՝ քիչ մի վերջը ցոյց տուած այնքան յանկարծակաւ պաղուցիւնը, նպատակած էին աղբիւր աղջկանը վրայ, և իրեն մէջ յառաջ բերելու հեղձու միայն տաժանելի զգայութիւնը չոր և հաւ յեղա կարծ կ'զգար:

Այսու հանգիստ քանի մը պտուղ կերաւ և սկսեալ մը սուրճ առաւ:

Գ. Ե. Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՊԱՆԿԻ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԻԹԻԹԵ — ԳԼԽԱԽՈՐ ՎԱՃԱՌԱՏԵԼԻ ՆԱԽԻՆ ԶԱԲԹԻԹԵԻ ԾԵՆԻ

կը բացուին և ապա իրենց տէրերուն կը արդին եթէ, ամեն պարագայի մէջ, սրիէ վտանգաւոր բան մը չեն պարունակիր»:

Հակառակ այս ամենուն, «Տէլի Նիուզ»-ի վերոյիշեալ թղթակիցը, կրցած է ձեռք անցընել հեռագիր մը որ համառոտակի տեղեկութիւններ կուտայ անցեալ յունիս և յուլիս ամիսներու մէջ տեղի ունեցած դէպքերու վրայ:

Այդ երկու ամիսներու մէջ 400 հոգիի չափ սպաննուածներ կան: Յունիսի սկիզբը Բերգակի գիւղը աւարի արուած էր, յաջորդ ամիսուն մէջ, քիւրտ պէյի մը աներկութեամբ նալը — բան մը որով կամբաստանուին Մուսկանցի հայերը — պատճառ եղաւ վեց ուրիշ գիւղերու այրուելուն:

Օգոստոս Ծին, Մուշի քաղաքական ժողովը, հեռագրով մը Սուլթանէն պաշտպանութիւն և կամ զաղթելու արտօնութիւն խնդրեց: Փոխանակ պատասխանի, քաղաքական ժողովոյ անդամները հարցաքննութեան ենթարկուեցան, ինչ որ ուրիշ գործնական արդիւնք մը չունեցաւ, բայց եթէ առիթ տալ Գիւրտերու որ քուսը հինգ հազիւ աւելի հայեր սպաննեն օգոստոս 15էն 20:

Օգոստոս 20ին նոյն ժողովէն նոր հեռագիր մը կը զրկուի Սուլթանին. յաջորդ օրը, Օրմանեան Պատրիարքը պաշտոն կանչուելով, կը վստահեցնեն իրեն թէ միջոցներ ձեռք անուած են խառնակութեանց առաջը առնելու համար: Հրաման տրուեցաւ նաև իրեն որ հեռագրէ Մուշի ազգայիններուն թէ ապահով ըլլան: Բայց իր առաջին հեռագիրը վար զրուեցաւ, որովհետև պարունակութիւնը գահացուցիչ չէր թրքական տեսակետով, ուստի բաւականացաւ իմաց ապրով թէ Սուլթանը հարկ եղած հրամանները տուած էր:

Սիեպեմբեր 2ին միայն ստացուեցաւ Պոլսոյ մէջ, առաջին հեռագիրը որով կիմացուեր թէ շարքի տեղի ունեցած են Մուշի մէջ: Դեպքանատներու հաղորդուած ձեռքարկի մէջ, բնական է թէ յիսուսի մօտ հայեր փորձած են կրակի տալ տաճկաց թաղը, որով տեղի տուած են կոռուներու որոնց մէջ երկու կողմէն ալ զոհեր գտնուած են: Ասկէ աւելի հաստատ ըլլաւ չկան այս մասին, բայց Մուշի, Խարբերթի, Երզնկայի և Կարնոյ համար գիւրտերու զրկուելու վրայ են, ինչ որ ենթադրել կուտայ թէ կացութիւնը շատ ծանր է:

Յունիսի սկիզբէն ի վեր Սասունէն լուր չկայ. և այս լուրերը առանց պատճառի չէ ապահովապէս:

Պ. ար Պոլսոյ, «Թայմ»-ի բարիգետեան թղթակիցը, որուն զորքը և յարաբերութիւնները աշխարհիս ամենէն հնչեցականորէն ընդհարմար են:

Միւսկան ինքը պանան կը ստիկը ուտելու, հանրաժողովը ելաւ և ազախիւններ արծաթեայ տաշտը, անուշահոտ չորով լեցուն քոփաւիսներ և ոսկեման անձեռոցներ բերին:

Չօհրա ձեռքները երկնցուց, սեւամորթ աղախին մը քոփաւիսը կըցեց, ուրիշ մը տանձաձև վարդապոյս փոքրիկ օճառ մը կարկանդակ. քանի որ օճառը ձեռքներուն շփուէն կը հալէր, գերին շուրջ կը հոսէր նուրբ ծորանով զոր ուրիշ սև մը կ'ընդունէր հանրամիտ ոտքը ծնրադրած, տաշտը շատ գեղի ի վեր իր օգոստոսական տիրուհիին կարկանդակով. երբ գործողութիւնը աւարտեցաւ, չորրորդ կին մը յառաջ անցաւ և առաջ մեծածախ անձեռոց մը երկնցուց:

Հանրաժողովը կը սրբէր մեղմով, խընամբով, այդ գործէն կարծես թէ ծայրահեղ հաճոյք մը զգալով, յետոյ, երբ ըստ բաւականին լուսացուեցաւ, անուշահոտեցաւ:

Ուրիշ տեղեր կը գնեն զինքը, այս անգամ Չարին ի Ֆրանսա ըրած այցելութեան առթիւ թղթակցութիւն մը զրկած է իր թերթին որուն մէջ կըսէ թէ «Թէն յիմարութիւն պիտի ըլլար յաւակնել թէ անկի ու տեղի գիտեմք թէ ինչ խօսուեցան այս տեսակցութիւններուն մէջ, ասկայի ի վիճակի եմ ըսելու թէ խօսակցութիւնները ընդհանրապէս դարձան Արեւելի և Մայրագոյն Արեւելի ինչպիսիքներուն վրայ: Մէկ կողմէն համաձայնուեցաւ թէ պէտք էր ստիպել թուրքերուն իր խօսութեանը կատարել և միւս կողմէն անհրաժեշտ զատուեցաւ Եւրոպական համաձայնութիւն մը զայցանել Արեւելի մէջ գոնէ, Սուլթանէն գոհացում մը պահանջելու համար:

«Հայկական հարցն ալ խնդրոյ նիւթ եղաւ և Ռուսիա, որ շարքերու ժամանակ, որեւէ միջամտութեան մը արգելք եղած էր, կերելի թէ այժմ մտադրած է այդ օրինակ բան մը չի թողարկել: Չարին կատակարարութիւնը կըսէ թէ Հայերուն երկու ձամբայ կայ որուն պէտք է հետեւին, կամ այն է որ պէտք է Ռուսիոյ պաշտպանութեան գիւտել և կամ ընդունին այն թշուառ կացութիւնը որուն ենթարկուած են»:

Պ. ար Պոլսոյ տուած տեղեկութիւնները եթէ երբեք ստույգ են — ինչ որ շատ կասկածելի կը թուի մեղի — դեռ շատ մօտալուր ըլլալու չէ այն թուականը ուր Եւրոպական տերութիւնները պէտք է միասնաբար վերջ մը գնեն այն անտանելի վիճակին որուն մէջ կը գտնուին մեր գործող հայրենակիցները:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Կ. Պոլսոյ կրօնական ժողովը իր վերջի նիստերէն մէկուն մէջ մնած ըլլալով այս միջոցիս Գահիրէ գտնուող Գաբրիէլ Զինճիր-ճեան անուն քահանայի մը կարգադրութեամբ, այս որոշումը հաղորդած է Եգիպտոսի առաջնորդ Գե. Թովմէի Եպ. Այվազ-Եանի, պէտք եղածը տնօրինելու համար:

Ժամը եկած է ուրեմն վերջ մը գնելու բարեպաշտը նախկին քահանային գալթակ-դեցուցիչ ընթացքին որուն շարունակութիւնը պարզապէս ամօթ մըն էր Հայ ազգին արժանապատուութեան համար:

— Կը յիշենք մեր ընթերցողներուն թէ վաղը, կիրակի, Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ մէջ տեղի կունենայ Գալստեան վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսը, կէս օրէն յետոյ ժամը 3ին:

Տ. Ե. Դ. Ա. Կ. Ա. Ն.

Ն. Բ. Խաթիւր եկող շարժում մէջ Գահիրէ պիտի գայ և մէկ երկու օր պիտի մնայ Գուպպի պալատը:

և չորրորդեցաւ, վերստին կանգնեց իր բարձր հասակը և Ժերմէնին հետ խօսող նորաստեղծ լիւն քանի մը խօսք ուղղել վերջը, հեռացաւ ծանրաշուք կերպով, ետեւէն կիսներու ամբողջ ժողովուրդ մը, վաղնջուց թագուհիի ճշմարիտ եղբայր:

Ժերմէն ինքզինքը միակ կը կարծէր, բայց քիչ մը առաջուան զեռահասակ աղջիկը վազեց եկաւ:

— Ձեզ իմ խնամոցս յանձնեցին... ձեզի շատ աղէկ հոգ պիտի տանիմ... Երկուքս ալ չենք ձանձրանար:

ԴԱՌԻՍ Գ.

Տասնութեան տարեկան, կարճ գոռու մազերու մացառի մը տակ, լայն լայն բացուած ծիծաղկոտ աչքեր, հանձարեղ ճակատ մը, կարմիր, ամուր և անողջ շրթունքներ, շաքոցիչ ախտներ, ոսկի գոյն մը մանկա-

— Նախարարութեանց զեռանտունները որոնք ամառուան եղանակին մէջ Աղեքսանդրիա Էրզրումէն, յառաջիկայ ուրբաթ օր Գահիրէ պիտի վերադառնան:

— Արապի փաշա հեռագիր մը զրկած է Խրտիմին, Նորին Բարձրութեանն ունկնդրութիւն մը խնդրելու համար, որ ներքին ըլլայ իրին իր երախտագիտական զգացումները ներկայացնել յոստ իր վեհապետին: Խընդիմ պատասխանը ասկայն անձանքով կը մնայ մինչև այսօր:

— Յառաջիկայ Նոյեմբերին մասնաւոր պատուիրակութիւն մը պիտի գայ Լիւստոնի արտաքին գործոց նախարարութեան կողմէ, հրաւիրելու համար Խաթիւր որ ներկայ գտնուի Էտուար Է. թագապետութեան հանդէսներուն:

— Ս. Պապը՝ Պիոս Թ. ի պատուանշանին հրամանատարութեան աստիճանը շնորհած է հանրագումար շինութեանց նախարար Ժախրի փաշայի:

— Տաճկաստանի ծխախոտի Ռեմի, իր շինած սիկառէթներուն վաճառման համար յատուկ մասնաճիւղ մը հաստատուած է ի Գահիրէ, Մանախ փողոց, Օսմանեան պան-ըայի սեփական շէնքին մէջ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌԱԳՐԱՐ

Ն/ու Բաղ (Նախալ) 1 Հոկտ. — Պօլսոյ ներքին տնտեսական մը օրէնք. 26ին թաւանալ չիլի կամուրջաց պահակախումբը յանկարծակիի բերած է:

Լոնտոն 2 Հոկտ. — Լօրտ Գիշեր կը հեռագրէ: Բէքէվիլի հրամանաց տակ գրանուող բանակին վրայ եղած յարձակման միջոցին, որ զիշեր ժամանակ տեղի ունեցած է, թշնամեաց խումբը 1,000 հոգիէ կը բաղկանար, Պօլսոյ մէջ կորուստով ետ մղուած են: Մեր կողմէն 2 սպայ, 31 զինուոր սպաննուած են, 14 սպայ, 114 զինուոր վիրաւորուած: Գնդապետ Բէքէվիլ թաթկապէս վիրաւորուած է: Գնդապետը կը հեռագրէ թէ բոլոր զինուորները ծայրայեղ ջանքարատութեան ցոյց տուած են: Վլադիմիր-թայնի մէջ գրաւուած երկու թշնամութիւններ ետ անուած են:

Բեքիլ 2 Հոկտ. — Զօրավար Վու 1500 կանոնաւոր զինուորներով ի փախուստ դարձուցած է Թրիաթի ապստամբները որոնք Գերմանական միսեոնը այրած էին: 200 ապստամբ սպաննուած և շատեր ալ զըլխատուած են:

Նաւրոյի 2 Հոկտ. — Մաքրանոցի հիւանդներուն վիճակը գոհացուցիչ է, նոր գէպը չկայ: (Ռիփօթ)

Կան հասակ մը, ձեռքներ և ոտքեր, ահա առոնք էին Սթա Ապուհան անուշիկ աղջիկ մը յարգարող ֆիգիւրական հրապոյցները, հանրմիտ պաշտած փոքրիկ արարածը, որ անմիջապէս կարողացած էր իր անսեթեթ շնորհքով և իր հիւրամեծարութեան անկեղծիկ մտքութեամբ Ժերմէնի օրտը շահիլ:

Իր չարաբախտութիւնը բերած էր զինքը այս պալատը երկու տարի առաջ, բոլորովին մասնաւոր պարագաներու տակ:

Հայրը, ճարտար դարբին, շատ անգամ աշխատած էր հարէմին մէջ՝ ներքինիներուն առաջնորդութեամբ. Սթա Ապուհան հետը կ'երթար:

Հանրմիտ ըլլալը երթալու համար՝ շրջուցիչ կէտիւններ կը հագցնէին փոքրիկ աղջիկները, պղնձէ գոհարներով կը ծածկէին զայն և երգեր կը սովորեցնէին անոր, ներ-

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ՍՐՃԵԹՈՒԴԹԻՒՄ

Աղեքսանդրիա, 4 Հոկտ.

Բերկլիւէ-Կիւ	100 1/2
Իւնիֆիէ	107 1/4
Տայրա Սաւիյէ	103 /—
Տօմանեալ	104 1/4
Թրքական Գոնսօլտէ, Կոնսթ. Ե.	26 57.
Բուսիլի Երկաթուղի	Փր. 102 /
Գանալ տը Սիւէզ	» 3706 /—
Գանալ տը Սիւէզ օպերիւ	» 640 /—
Նաշ. պանք օֆ Էնգլիշ Բ. Ո.	11 5/16
Աղեքս. Թրամվէյ (Երիւ.)	Փր. 48 1/2
Աղեքսանդրիոյ Թրամվէյ	» 29 /—
(աքսիոն տիվիտանտ)	» 555 /—
Գրէտի ֆօնսիէ Էգ. աքսիոն	» 264 1/2
Գրէտի ֆօնսիէ 3 0/0	» 637 1/2
Ջրի Էնկ. Գահիրէ	» 35 7/8
» Աղեքսանդրիա Ա. Ո.	» 12 /—
» Թանթա	» 48 /—
Պէնթալի անանուս ընկ.	» 100 /—
Ինթերնացիոնալ օպեր. 5 0/0	» 0.15. 3
» » աքսիոն	» 0.15. 9
» սոյթ ընտ սօստ	» 4. /—

ԲԱՄՊԱԿ ԵՒ ԱՐՄՏԻՒՄ

ՔՕՆԴՐԱ

Աղեքսանդրիա, 4 Հոկտ.

Բամպակ. Նոյ. Թաւր.	9 11/16 — /—
» Յուն.	» 10 3/16 — /—
» Մարտ	» 10 13/16 — /—
Պիլդէ. Նոյ. Գիւ. Ե.	» 63 3/4 — /—
» Գիւ. մարտ	» 63 35/40 — /—
Բակլա. սեպ. հոկտ.	» 90 1/3 — /—
» Նոյ. Գիւ. Ե.	» 93 3/4 — /—

ՖՐԱՄԱԿԱՆ ՆՈՐ ԴԵՂԱՐԱՆ

Ժ. ՏԻՐԼԻՒՄ

ԳՈՀԻՐԷ — ԷԶԳԷՔԻՅԷ

Պ. Ժ. Տիրիք պատիւ ունի ծանուցանել իր յարգոյ յաճախորդներուն թէ այսուհետեւ իր զեղարանը բաց պիտի մնայ գիշերներն ալ մինչև առաւօտ:

Գիշերային սպասարկութիւնը պիտի կատարուի ի ձեռն վկայեալ գեղագործի մը:

4—10

Զ Ե Կ Ո Յ Ց

Փաստաբան Պ. ԽՈՐՈՎ ԶՈՀՐԱՊ, պատիւ ունի ծանուցանել իր յաճախորդներուն թէ իր փաստաբանական գրասենեակը փոխադրած է Օսմ. Պանթալի հին շէնքին գէմ, Գալլութա Պիլտինկա, վերնայարկ թիւ 21 սենեակը:

քննիչները գանի կուտային կիներուն, և ձեռքէ ձեռք, այս սիրուն խաղալիքը կը հասնէր կ'երթար մինչև Զօհրան՝ որ քիչ քիչ կը վարժուէր անոր, հաճոյք կըգար անոր շաղկապութիւնները լսելէ, յանկարծ վերին միջնայարկ մը մէջ նստած ֆէյհաւ աղջկան հոգստանքները գիտելէ:

Աղջկը տունը կը գտնար սիրտը ցաւած, գլուխը կէս մը ընդհանրուած աղուր բաներով լեցուն և, իշխանական սրահներէն դուրս ելելուն, հայրական կրպակը շատ անուր կ'երթէր իր նորագործոյ փառաւորութեանը:

Տասնչորս տարեկան նոր եղած էր, երբ հայրը, փաշային պատշաճին վրայ երկաթի ձող մը նորոգած առնէր, քանի մը մէզը բարձրէն վար ինկաւ ու մեռաւ:

Աղջիկը այն պահուն պալատն էր (Շարունակելի) Թարգմ. 3. ՍԵՔՍԱՆ

Յ. ԲԵՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱԱՃՈՒՍԵՂԻ — ԳՈՀԻՐԷ, ԱԹԱԳԱՒԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԻՆ ԶԱՊԹԻՅԷԻ ՇԷՆՔԻՆ ԴԵՄ

Թէլէֆօն Թիւ 304.